ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՍԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (482—484 թթ.)

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ (Լենինգրադ)

482—484 թթ. ապստամբությունը պատկանում է, անշուշտ, մեր միջնադարյան պատմության ամենից խոշոր դեպքերի շարքին։ Այն եղել է V դարի օրգանական ծնունդ, արտահայտել հակասությունների մի բարդ հանգույց և մեծ ազդեցություն գործել հետագա տարիների պատմական ընթացքի վրա։ Այդ շարժումը միանգամայն համեմատելի է Վարդան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության հետ (450—451 թթ.)։ Մինչդեռ, եթե Վարդանանց պատերազմը մանրամասն ուսումնասիրված է, եթե նրա հերոսներին նվիրված են ոչ միայն պատմագիտական աշխատություններ, այլև վեպեր ու պոեմներ, նրանց պատկերել են նկարիչներ ու քանդակագործներ, ապա երկրորդ ապստամբությունը մնացել է ինչ-որ չափով ստվերի տակ։ Բավական է ասել, որ թյուրիմացության պատճառով այն մինչև վերջին ժամանակներս անգամ սխալ է թվագրվել[1]։

Այդ վիճակը բացատրելու համար հարկավոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքները։ Հայոց եկեղեցին հաստատած է եղել հատուկ մի տոն՝ «Սրբոց Վարդանանց զօրավարացն մեր՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»։ Այդ օրը նշվում է զոհվածների հիշատակը, ուստի երևույթը որպես այդպիսին մնում է մարդկանց հիշողության մեջ, ստանալով հատուկ փայլ։ Վահանի ապստամբությունը ևս ունեցել է սուրբ նահատակներ, սակայն նրանք չեն արժանացել նույն համբավին, ինչ որ Վարդան Մամիկոնյանը և յուրայինները։ Մյուս կողմից, առաջին ապստամբության գլխավոր սկզբնաղբյուրը՝ Եղիշեի «Բան վասն Հայոց պատերազմին» երկը գրված է հատուկ ոճով, որը 15 հարյուրամյակ անընդհատ ոգևորել է ընթերցողին, առաջացրել յուրատեսակ հուզական տրամադրություն։ Երկրորդ ապստամբության գլխավոր, փաստորեն միակ սկզբնաղբյուրը Ղազար Փարպեցու աշխատությունն է։ Այդ երկը ևս մեր հին պատմության լավագույն կոթողներից է։ Նրան ևս հատուկ են գրական բարձր, եզակի արժանիքներ։ Բայց այդ հատկությունների մեջ թափանցելու, համապատասխանորեն գնահատելու համար հարկավոր է պատշաճ ուսումնասիրություն։ Իսկ Եղիշեի կրքոտ լեզուն հասկանալի է բոլորին։ Սակայն թե ինչու Վահան Մամիկոնյանի գլխավորած շարժումը լայն հասարակական ճանաչում չի գտել, այլև մանրակրկիտ հետազոտության չի ենթարկվել։ Սույն հոդվածով նպատակ ունենք ինչ-որ չափով ծածկել եղած բացը, միաժամանակ հիշեցնելով ընթերցողին, որ 1984 թ. լրացել է այդ հուժկու շարժման հաղթական ավարտի 1500-ամյակը։

* * *

Մեծ Հայքի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև (387 թ.) և Արշակունյաց հարստության վերացումը հայոց աշխարհի արևելյան հատվածում (428 թ.) դիտվել են և շարունակում են դիտվել որպես շրջադարձային երևույթներ. կորցնելով սեփական պետականությունը, Հայաստանը ոտք է դնում մի բոլորովին նոր դարաշրջան։ Արդյո՞ք արդարացված է այդպիսի ծայրահեղ տեսակետը։ Ինչ խոսք, և՛ 387 թ., և՛ 428 թ. խորհրդանշում են հայոց պատմության մի նոր շրջանի սկիզբ։ Սակայն զրկվելով սեփական թագավորական իշխանությունից, հայերը կարողացան պահել նախկին պետական կառուցվածքի մի շարք կարևոր հաստատություններ և դրանով ապահովեցին լայն չափերի հանող ինքնավարություն։ Մարզպանության վերածված Հայաստանում մարզպան են նշանակվում տեղացի նախարարներ (մինչև

---

[1] *Համմտ. Կ. Ն. Յուզբաշյան. Երբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1։*

VII դարի կեսերը՝ ոչ պակաս քան 6 հոգի)։ 482 թ. ապստամբ հայերը Սահակ Բագրատունուն ընտրում են մարզպան, ցույց տալով նաև, որ ըմբոստանում են ոչ թե ինստիտուտի դեմ (չնայած մարզպանի պաշտոնն էր մարմնավորում պարսից շահանշահի գերագույն իրավունքը Հայաստանի նկատմամբ), այլ այն կարգի դեմ, երբ այդ պաշտոնը հանձնվում է եկվոր պարսիկի։ Ինչպես էլ որ գնահատելու լինենք Վասակ Սյունու վարքագիծը 450—451 թթ. ապստամբության ընթացքում, ոչ մի կերպ չի կարելի անտեսել, որ նա եղել է տեղացի, հայ նախարար։ Կատարյալ սուվերենությունը հայերը, ինչպես միշտ, կապել են սեփական թագավորության հետ և չեն շփոթել այն ինքնավարության հետ (որքան էլ լայն չափերի հասած լիներ վերջինս)։ Սակայն V դարի պայմաններում հայոց թագավորությունը վերականգնելը եղել է անհնարին, հայերը դա լավ են գիտակցել և ձգտել են ապահովել միայն ինքնավարությունը, թեկուզև պարսից գերիշխանության ներքո։

Ինքնավարությունը արտահայտվել է նաև նրանում, որ սպարապետի բարձր պաշտոնը մնացած է եղել Մամիկոնյան տոհմում (մինչև արաբական արշավանքը՝ 6 սպարապետ)։ Միայն 449 թ. է վերացվել այն ավանդույթը, որի համաձայն հազարապետ է նշանակվել տեղացի նախարարը (այդ թվականին պաշտոնից հեռացվել է Վահան Ամատունին)։ Արշակունյաց շրջանում մաղխազը եղել է թագավորական թիկնապահների պետ։ Բացառված չէ, որ թագավորական իշխանության վերացումից հետո ևս մաղխազությունը, թեև փոխելով իր բովանդակությունը, շարունակել է գործել որպես հատուկ ինստիտուտ։ Լինելով, ինչպես և [illegible] ժառանգական, այդ գործակալությունը մնացել էր Խորխոռունիների տոհմում։

Հայտնի է Եղիշեի խոսքը՝ Արտաշես II Արշակունու գահազուրկ լինելուց հետո «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[2]։ Այդ դիպուկ արտահայտության մեջ շեշտված է ինքնավարության բուն էությունը. ռազմական ուժը մնացել է նախարարների ձեռքում, գերագույն հրամանատարը՝ սպարապետը, տեղացի իշխան է, ուստի նախարարներն են երկրի տերերը։

Ինքնավար ինստիտուտ է եղել նաև հայոց եկեղեցին։ Նվիրապետական առումով նա դեռևս կախում ուներ Կեսարիայի մետրապոլիտությունից, այդ քաղաքում են ձեռնադրվել հայոց կաթողիկոսները առնվազն մինչև Սահակ Պարթևը (վախճ. 439 թ.)։ Սակայն որպես հասարակական օրգանիզմ, քաղաքական բացահայտ ֆունկցիաներով, այն եղել է անկախ ոչ միայն Բյուզանդական կայսրությունից, այլև Սասանյաններից։

Իբրև ամբողջություն Արևելյան Հայաստանը կախման մեջ է եղել անշուշտ պարսից պետությունից։ Բայց իրենց տիրույթներում նախարարներն են մնացել իշխաններ։ Նույնը վերաբերում է նաև եկեղեցական հողատիրությանը։

Այսպիսով, չնայած Հայաստանը գտնվել է պարսից շահանշահի գերիշխանության ներքո, երկրում տիրել է որոշ հավասարակշռություն, և հենց այդ վիճակն էին ձգտում ապահովել հայերը։ Պոռթկումն առաջանում էր այն դեպքում, երբ այդ հավասարակշռությունը խախտվում էր[3]։ Այդպիսի խախտում է տեղի ունեցել Վարդանանց պատերազմի նախօրեին՝ ընդգրկելով հասարակական կարգի կարևորագույն ոլորտները։

Միջնադարյան Հայաստանի հասարակարգը եղել է պահպանողական։ Հասարակական սանդուղքի վրա իրենց կայուն տեղն են ունեցել արտոնյալ ոչ միայն առանձին դասեր, այլև այդ դասերը կազմող առանձին տոհմեր և անդամներ։ Գահնամակով որոշված է եղել նախարարական տոհմերի հարաբերական ուժն ու կշիռը, և այդ կարգը փոփոխվում էր միայն ծայրահեղ պայմաններում։ Հազկերտ II-ը (438—457) հենց այդպիսի քայլերի դիմեց. «Սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն արժանաւորսն յետս տանէր. մինչև զհայր և զորդի բակէր ի միմեանց»[4]։ Համոզում էր

2 Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 6, տող 6—9։

3 Այն տեսակետը, թե իբր V դարում Հայաստանում սեփական թագավորությունը վերականգնելու փորձեր են եղել, թվում է մերժելի։ Եղիշեի տվյալները հիմք չեն տալիս նման եզրակացության, իսկ ուշ շրջանի հեղինակների պատմածը առասպելական բնույթ է կրում. հակառակ կարծիքը տե՛ս В. С. Налбандян. Егише. Ереван, 1972, с. 153—162.

4 Եղիշե, էջ 10, տող 17—21։

նախարարներին ուրանալ քրիստոնեությունը, գայթակղեցնում նրանց ոսկով ու արծաթով, գուշկերով ու ագարակներով, իսկ «զոմանս պատուով և իշխանութեամբ մեծամեծօք»[5]։ Հակառակ դրան, երբ Տիգրան ժամանած նախարարները (Վասակ Սյունին, Վարդան Մամիկոնյանը և մյուսները) հետ կանգնեցին իրենց հավատքից, ապա արքայից արքան այլ պարգևների հետ մեկտեղ «զդպատիս և զդա՛ս նորոգէր. յառաջ մատուցանելով և երևելի առնելով ընդ ամենայն սիւնկերական իշխանութիւնն»[6]։

449 թ. Հաղկերտ II-ը սկսեց իր մշտական թշնամի «բռշաններին» դեմ ուղարկել նաև հայերին, վրացիներին, աղվաններին, անդրկովկասյան այլ ժողովուրդներին՝ «որոց ոչ էին օրէնք երբեմն զայն նանապարհ յառաջ ժամանակաւ»[7]։ Այդ քայլը ևս մի զգալի խախտում էր եղած ստորության և անհավասարության պետական ուժգնություն առաջացներ։ Ընդհանուր առմամբ հայոց այրուձին մեծ համբավ է ունեցել պարսից արքունիքի աչքում, ուստի եղած կարգի յուրաքանչյուր փոփոխությունն Հայաստանում ընդունվում էր հիվանդագին ձևով։ Այդպիսի վիճակ է տիրել մինչև 449 թ.։

Ինքնավարության բացահայտ խախտում է եղել հետևյալը. 449 թ. Հայաստան է ժամանում պարսից արքայի վսահյալ Դենշապուհը։ Նրա կողմից ձեռնարկված միջոցառումներից ամենից չարագույնը, ըստ Եղիշեի, եղել է հազարապետի պաշտոնի հանձնումը պարսիկի՝ «որ հազարապետն էր աշխարհին, իբրև զնայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից՝ զրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և մեւս ևս մոգպետ՝ զատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյն փառսն առա ազեսցեն»[8]։ Հազարապետը վարում էր աշխարհի տնտեսական գործերը (Հայաստանում նրա պաշտոնը ըստ երևույթին այլ էր, քան Հարևան Ադվանքում կամ Պարսկաստանում)[9]։ Դենշապուհը հիմնական հանձնարարությունն է եղել աշխարհագիր անել Հայոց երկրում հարկերը բարձրացնելու համար։ Պարզ է, տեղացի հազարապետը (իսկ այդ պաշտոնը վարում էր Վասակ Ամատունին, որի երկրում է վախճանվել և հողին հանձնվել Մաշտոցը) կարող էր միայն դիմադրել պարսից աստիճանավորին։ Այդ գործակալությունը ընդմիշտ դնաց հայերի ձեռքից. V դարի վերջերին Տեկորի հայտնի արձանագրության մեջ հիշատակվում է ոմն Մանան հազարապետ. արդյո՞ք նա տեղացի էր[10]։ Ինչ վերաբերում է պարսիկ դատավորին, ապա նրա ներկայությունը դեպքում էր նաև եկեղեցու շահերին՝ եպիսկոպոսի իրավասությունը (աշխարհիկ դատավորի կողքին) եղել է շատ լայն։

Դենշապուհը ժամանել էր Հայաստան իբր հարկերը վերացնելու և այրուձին պահելու տուրքերը կրճատելու նպատակով։ Իրականում նրա քայլերը ճիշտ հակառակ ուղղվածություն են ունեցել։ Երկրի հարկը նա ավելի ծանրացրեց, հաղորդում է Եղիշեն։ Հայտնի է, որ քրիստոնյա երերում եկեղեցին օգտվում է հարկային իմունիտետի իրավունքից, իսկ Դենշապուհը եկեղեցու «առատութիւնն» «ծառայության» տակ դրեց, այսինքն դարձրեց այն հարկատու։ Աշխարհագրի տակ ընկան նաև վանականները (ուստի նրանք ևս պիտի հարկ վճարեին)։ Հարկերը ծանր էին, շարունակում է մեր հեղինակը, «որովհետև որտեղից պետք էր հարյուր դահեկան տանել, կրկնապատիկն էին առնում, այսպես էլ [հարկի տակ] դրին եպիսկոպոսներին և երեցներին, ոչ միայն շեն, այլև ավերակ տեղերը։ Մանավանդ, ո՞վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր էին նշանակված լեռների, դաշտերի և անտառների վրա։ Առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակարար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին՝ թե մի տեղից որ այսքան

5 Նույն տեղում, էջ 17, տող 2—4։

6 Նույն տեղում, էջ 50, տող 19—22։

7 Նույն տեղում, էջ 10, տող 10—11։

8 Նույն տեղում, էջ 23, տող 7—11։

9 Հազարապետի մասին տե՛ս Н. Г. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 445—446; C. Toumanoff. Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963, p. 205—206, n. 233; Ս.-Ա. Ա. Կոստանյան. «Հազարապետ» տերմինի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 2—3։

10 Н. Я. Марр. К датировке ктиторской надписи Текорского храма.—Христианский Восток, № 3, 1915, с. 66—67, 71; Կ. Գ. Ղաֆադարյան. Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մերոպյան այբուբենի տառաձևերը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 44, 51—52։

դանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը»։ Այնուամենայնիվ, որքան և ծանր էին Դենշապուհի միջոցառումները, ոչ ոք նրան չընդդիմացավ, որովհետև բացահայտ կերպով դեռևս ձեռք չէին տալիս եկեղեցուն[11]։

Եղիշեի վերջին միտքը նշանակալից է։ Հակառակ նրան, որ Դենշապուհի նորամուծությունները թուլացնում էին եկեղեցու նյութական հիմքը՝ «չև էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին»։ Թեև, հեղինակի ասելով, Հազկերտը իր գահակալության երկրորդ տարուց սկսել էր հալածել քրիստոնյաներին, դրդել նրանց ուրացության և այլն, սակայն եկեղեցու «ուխտը»[12], եկեղեցական կազմակերպությունը ամուր էր։ Արարողությունը շարունակվում էր տաճարներում, ուստի նյութական կորուստները կարելի էր հանդուրժել։ Իսկ երբ պարսիկները ձեռք բարձրացրին եկեղեցու վրա՝ ձգտելով վերացնել նրա հաստատությունները, հայերը դիմադրեցին բացահայտ կերպով։ Ինչպես գիտենք, ապստամբությունը սկսվեց նրանից, որ Հայաստան ժամանած մոգերը ջարդեցին Անգղ գյուղաքաղաքի եկեղեցու դռները. տեղի երեց Ղևոնդը իսկույն աղմուկ բարձրացրեց, և Անգղի բնակիչները դագանակները ձեռքերին, դուրս շպրտեցին բռնացողներին և սկսեցին կիրակնօրյա արարողությունը։ Այդ միջադեպից հետո ապստամբությունը դարձավ ընդհանուր[13]։

Ինչպիսի՞ բնույթ է ունեցել Վարդանանց պատերազմը, եղե՞լ է այն կրոնական թե ոչ՝ ահա մի հարց, որը շարունակում է քննարկվել գիտական գրականության էջերում[14]։ Հարցը ինքնին ենթադրում է հակադրություն, մինչդեռ իրական վիճակը այն բացառում է։ Կարելի է վիճել՝ ինչն է ավելի նպաստել ընդհարմանը՝ հարկերի ծանրացումը, կրոնական հալածանքը, բռնի կրոնափոխությունը, նախարարական կարգի խախտումը և այլն։ Կարևորն այն է, որ բախումը տեղի է ունեցել քրիստոնյա հայերի և զրադաշտական պարսիկների միջև, սրանց հարել են ուրացողները։ Միջնադարյան աղբը հանդես է եկել շատ դեպքերում իբրև եկեղեցական համայնք, դրա օրինակներից մեկն է հայ ազգը։ Էթնիկական ինքնագիտակցությունը համընկել է այստեղ դավանականի հետ։ Ագրեսիվ այլադավան շրջապատի առկայությունը նպաստել է այդ ընթացքին։ Սեփական գիրն ու կրոնականությունը (որոնց շնորհիվ քրիստոնեությունն ավելի խոր արմատներ էր ձգել երկրում) պայմաններ ու նախադրյալներ է ստեղծել, որպեսզի արագ կերպով զարգացող հասարակական ինքնագիտակցությունը գտնի նաև գրավոր արտահայտություն։ Իհարկե, ազգային պատկանելության զգացումը գիտակցվել և արտահայտվել է նաև այլ ձևերով։ Այսպես, «Հայք» (հայեր) հասկացության կողքին ունենք նաև «հայաստանեայք», այսինքն մի երկրի, մի տարածությանը պատկանող ժողովուրդ։ Հայերը առանձին հատված են կազմում շնորհիվ իրենց լեզվի, ասում է Փավստոս Բուզանդը[15]։ Գիտակցվել է նաև ընդհանուր ծագումը, սերումը մի նահապետից, լինի դա Ասքանազ, Թորգոմ թե Հայկ[16]։ Այդ նահապետներն իրենց

---

11 Եղիշե, էջ 23։ Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի. Երևան, 1958, էջ 27—28։

12 «Ուխտ» հասկացության մասին տե՛ս մասնավորապես՝ Elishe. History of Vardan and the Armenian War. Translation and Commentary by Robert W. Thomson. London, England, 1982, p. 9 etc.

13 Մոգերը Հայաստան հասան չորրորդ, այսինքն Տրէ ամսին. 450 թ. այն տևել է նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 3-ը։ Անգղի միջադեպը տեղի է ունեցել նրանց գալուստից 25 օր հետո, այսինքն նոյեմբեր-դեկտեմբերի կիրակի օրերից մեկին։ Այդ տվյալները քաղում ենք Եղիշեից։ Ըստ Ղազար Փարպեցու՝ ապստամբության որոշումը ընդունված է եղել 450 թ. գարնանը, իսկ ամռանը («հասեալ ամիսք տօթոյն ջերմութեան») ապստամբ հայոց զորքը արդեն կենտրոնացել էր Ծաղկոտն գավառի Անգղ ամրոցի շուրջ՝ «զայն տեղօք արարեալ բանակեցեալ արանց՝ դադարէին անդ զաւուրս տօթոյն» (Եղիշէ, էջ 58։ Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան. Տփղիս, 1904, էջ 60)։

14 Տե՛ս թեկուզ В. С. Налбандян. Указ. соч., с. 151—153 и сл.

15 «Իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին», «աշխարհ ամենայն Հայոց լեզուին», «աղատք և շինականք... հայ լեզուն առհասարակ» (Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. ԿՊ, 1883, էջ 28, 90, 192։ Սինեկդոխան յուրացված պիտի լինի Հին և Նոր կտակարանից, հմմտ. Դան. Գ, 4, 7. Ե, 19. Զ, 25. է, 14։ Ա Կորն. ԺԲ, 10, 28)։

16 Հղումները ամփոփված են՝ Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Ա, էջ 251—252, Բ, էջ 343—345, Գ, էջ 31—33։

հերթին սերում են բիբլիական պատրիարքներից, և Հայկի առասպելը, որը ծնունդ է առել դեռևս հեթանոսական Հայաստանում, ստանում է նոր՝ քրիստոնեական խմբագրություն։

V դարում Հայոց եկեղեցին դեռևս չի հակադրվել «տիեզերական» (իմա՛ կայսերական) եկեղեցուն, բայց այնուամենայնիվ նա արդեն վեր է ածվել կազմակերպչական առանձին միավորի, և նրա որդիք դիտում են իրենց իբրև հայ քրիստոնյաներ։ Ղազար Փարպեցու ասածից երևում է, որ Վասակ Սյունու փեսա Վարազվաղանը ուրանում է ոչ թե քրիստոնեական վերացական ուսմունքը, այլ այն, որ սերմանել էր ամեն մի հոգու մեջ «նահատակն և առաքեալն Հայոց Գրիգորիս»[17]։

Իհարկե, անգամ V դարում քրիստոնեությունը դեռևս չէր դարձել համատարած երևույթ։ Հեթանոսական տարրերը եղել է զորեղ, անցած դարերը բավական չէին այն ամբողջությամբ վերացնելու համար։ Ավարայրի ճակատամարտի մասնակիցներից շատերը մկրտված են եղել միայն նախորդ գիշերվա ժամերին[18]։ Նոր ուսմունքը կարող էին խորն ընկալել միայն լավ գրական պատրաստություն ունեցողները։ Չնայած նրան, որ գիրն ու գրականությունը տարածված է եղել ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհիկ ազնվականների շրջանում[19]՝ լայն զանգվածների համար քրիստոնեությունը եղել է ոչ այնքան փիլիսոփայական ու բարոյագիտական գրույթների համակարգ, որքան հատուկ խորհրդանիշ։ Բայց այդպիսի պարզունակ ընկալումն անգամ նպաստել է ուսմունքի գործունյա ուժին։ Այն էլ ավելացնենք, որ արարողությունները, որոնցից սկսվել և որոնցով ավարտվել է մարդու կյանքը, իրենց հերթին նպաստել են, որպեսզի քրիստոնեությունը ընկալվի և սիրականացվի իբրև հատուկ սեմիոտիկ նշան։ Էլ չենք ասում, որ քրիստոնյաները, իրենց բարքն ու կենցաղը զանազան բնագավառներում շեշտակի տարբերել են այլադավաններից։ Մոգությունն ընդունած Գուգարքի բդեշխ Վազգենը հայտնում է իր տիկնոջը՝ Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկին, որ մտադիր է մի ուրիշ կին ևս բերել Պարսկաստանից, միաժամանակ ամուսնանալ իր հարազատ դստեր հետ։ Քրիստոնյայի աչքում այդպիսի քայլը պիտի դիտվեր ավելի քան զազրելի։

Այսպիսով, պաշտպանելով քրիստոնեությունը և ըմբոստանալով զրադաշտության դեմ, հայերը, ինչպես նաև վրացիներն ու աղվանները, պաշտպանել են իրենց անկախությունը (հնարավոր սահմաններում) և իրենց կացութաձևը որպես այդպիսին։ Իսկ Սասանյանները, որոնք ձգտում էին հարևան ժողովուրդներին ամեն ինչում առնմանեցնել իրենց, իրացնելով իրենց հարձակողական քաղաքականությունը՝ պիտի դիմեին բռնի կրոնափոխության։ Մազդեզանց ուսմունքը III դարից սկսած եղել է զրադաշտության պաշտոնական ճյուղավորումը. այդ ուսմունքն ի նկատի ունեն հայ պատմիչները, երբ խոսում են «մոգության» մասին։ Եվ դրան են դիմադրել՝ հանուն փրկչի և ավետարանի՝ պարսիկներին ենթակա քրիստոնյա ժողովուրդները։

Հարկ չենք համարում ևս մեկ անգամ շարադրել Վարդանանց պատերազմի ընթացքը՝ այն հայտնի է յուրաքանչյուր հայագետի։ Նշենք միայն, որ ապստամբությունը եղել է կարճատև։ Բացահայտ դիմադրությունը սկսվել է, ամենայն հավանականությամբ, 450 թ. ամռան ամիսներին, այսինքն՝ Անգղի բախումից։ Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ին[20]։ Հակառակ նրան, որ հայերն այդ ճակատամարտում կորցրել են 1036 հոգի, իսկ պարսից

---

17 *Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 39, տող 26—29։ Տվյալ դեպքում բոլորովին կարևոր չէ, որ Վարազվաղանի օրոք Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը դեռևս չէր առաջացել, ուստի այդ առումով Ղազար Փարպեցու ասածը պետք է դիտել իբրև անգիտակցված անաքրոնիզմ։*

18 *Ե ղ ի շ է, էջ 114։*

19 *Այսպես, Վարդան Մամիկոնյանի մասին ասված է, որ նա «յոյժ հմուտ էր և ընդել գրոց մարդապետութեան, ուսեալ և խրատեալ ի սուրբ հայրապետէն Սահակայ ի հասուն հասակէ». Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 52, տող 32—33։ Նույնն է ասում նաև Կորյունը (Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 58, տող 19—21), հմմտ. Ե ղ ի շ է, էջ 105, տող 1—2.*

20 *Ճակատամարտի օրվա մասին Եղիշեն ոչինչ չի հաղորդում, իսկ Ղազար Փարպեցին ասում է, որ նախորդ օրը եղել է Պենտեկոստե մեծ տոնի ուրբաթ օրը։ Տոմարական պարզ հաշիվներից երևում է, որ 451 թ. հիշատակված ուրբաթը համընկել է մայիսի 25-ին, ուստի մարտը տեղի է ունեցել մայիսի 26-ին («հին», հուլյան տոմարով)։ Գրականության մեջ տարածված է նաև մի ուրիշ ամսաթիվ՝ 2 հունիսի 451 թ.։ Այդ ամսաթիվը հենվում է Մ. Չամչյանի սխալ հաշվումների վրա (Մ. Չ ա մ չ ե ա ն. Պատմութիւն Հայոց. Բ, Վենետիկ, 1785, էջ 464—465. Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում. Կոստանդնուպոլիս, 1912, սյուն. 372—373)։*

կողմը (պարսիկ «հեթանոսները» և հայ ուրացողները)՝ 3544, Հայաստանում այն դիտել են որպես պարտություն նաև ապստամբների համար («քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»[21])։ Դիմադրությունը, ճիշտ է, շարունակվել է մինչև տարվա վերջ։ Ամարայրից հետո ամիսներ անց Հայաստանի բազմաթիվ բերդերում հրաժարվում էին ենթարկվել թշնամուն։ Սակայն Վարդանանց պատերազմի վախճանը բացահայտ էր։

Մենք գիտենք, որ հայերի շարժումը (որին որոշ չափով հարել էր Աղվանքը) մեծ անհանդգստություն էր պատճառել պարսից արքունիքին։ Հակառամարտից անմիջապես հետո շահանշահը դավանական կատարյալ ազատություն է պահովում քրիստոնյաներին, անգամ ուրացողներին կոչ է անում վերադառնալ իրենց բուն աստծուն։ Փախստականները թույլտվություն են ստանում ետ գալ հայրենիք։ Հարկային լուծը թեթևանում է, ավելի դյուրին են դառնում այրուձի պահելու պայմանները[22]։ Վասակ Սյունու փոխարեն Հայաստանում մի նոր մարդպան է նշանակվում՝ Ատրորմիզդ Արշական, այսինքն Արշակունյաց տոհմից։ Սակայն գերի տարված նախարարները մնացին աքսորում, իսկ հոգևորականների մի մեծ խումբ, կաթողիկոսի գլխավորությամբ, տանջալից մահով ավարտեց կյանքը։

Ինչպես և Վարդանանց պատերազմի նախորդող տարիներին, ձեռք բերված հավասարակշռությունը եղել է անկայուն։ Մթնոլորտը գնալով խտանում էր, ապստամբության գաղափարը սկսել էր տարածվել թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում։ Նոր բախումը դարձել էր անխուսափելի։

* * *

Մեր գիտելիքները 482—484 թթ. ապստամբության մասին բխում են փաստորեն միակ սկզբնաղբյուրից՝ Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունից», որը հեղինակը շարադրել է V դարի վերջերին կամ VI դարի սկզբներին։ Ղազար Փարպեցու գրչին է պատկանում նաև հոչակավոր Թուղթը՝ ուղղված Վահան Մամիկոնյանին։ Այդ Թուղթը գրվել է ապստամբությունից հետո, բայց Պատմությունից առաջ։ Լինելով առաջնակարգ սկզբնաղբյուր հայոց մտավոր կյանքն ուսումնասիրելու համար, Թուղթը միաժամանակ մանրամասն տեղեկություններ է պարունակում հեղինակի մասին։ Ղազարը եղել է ապստամբության ապագա առաջնորդ Վահան Մամիկոնյանի մանկության ընկերը, բարեկամական հարաբերությունները շարունակվել են տասնյակ տարիներ։ Նա մասնակցել է ապստամբությանը, լինելով Կամսարականների կողքին, մոտ է եղել նաև մյուս նախարարներին և իր տեղեկությունները քաղել է իրազեկ մարդկանցից։ Ապստամբությանը նվիրված է Պատմության երրորդ գրվագը։ Չնայած սկզբնաղբյուրը եզակի է, ուստի արտաքին ստուգման ենթակա չէ, ներքին քննությունը համոզում է, որ Ղազար Փարպեցու աշխատությունը ստույգ տեղեկություններ է պարունակում շարժման ինչպես նախապատմության, այնպես էլ բուն ընթացքի մասին։ Հեղինակի շարադրանքին կարելի է լիովին վստահել[23]։

Հալկերտ II-ը վախճանվում է 457 թ.։ Որպես ժառանգորդ հանդես է գալիս նրա Որմիզդ որդին, սակայն մյուս որդին՝ Պերոզը, իսկույն ըմբոստանում է, երկամյա անընդհատ կռիվներից հետո սպանում է թագաժառանգին ու մնացած եղբայրներին և դառնում միահեծան արքայից արքա։ Գահ բարձրանալով Պերոզը կատարում է իր խոստումը և ազատ արձակում աքսորյալ նախարարներին։ 464 թ. նրանք վերադառնում են հայրենիք, օտարության մեջ անցկացրած

21 Տե՛ս Եղիշէ, էջ 119, տող 9—11։

22 Եղիշէ, էջ 130—131. վերևում ասացինք, որ 449 թ. պարսիկ Դենշապուհը եկել էր Հայաստան նման փոփոխություններ ներմուծելու համար, սակայն նրա գործունեությունը ընթացել էր ճիշտ հակառակ ուղղությամբ։

23 Ղազար Փարպեցու Պատմության առաջին գրվագը նվիրված է 387—440 թթ. անցքերին, երկրորդը՝ 450—451 թթ. ապստամբությանը։ Այդ երկրորդ գրվագը որոշ նմանություն ունի Եղիշեի աշխատության հետ, սակայն նրանց փոխհարաբերության հարցը շարունակում է լինել վեճի առարկա։ Միակ գիտական հրատարակությունը լույս է տեսել 1904 թ. (տե՛ս ծան. 13)։ Այժմ տե՛ս նաև՝ Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի. Երևան, 1982։ Հեղինակի մասին տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 343—376։ Կ. Ն. Յուզբաշյան. Ղազար Փարպեցի.--«Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 4, էջ 179—183։

լինելով շուրջ 13 տարի։ Ինչպիսի՞ն է եղել մթնոլորտը մայր Երկրում V դարի 60—70-ական թթ.։

Վարչական առումով փոփոխություններ չեն եղել։ Հայոց աշխարհը մնացել է առանձին մարզպանություն Ղվին մայրաքաղաքով՝ պահպանելով ինքնավարության ինստիտուտները։ Սակայն նախարարության վերաբերմամբ քաղաքականությունը փոխվել էր, ավելի շուտ այն երեւույթները, որոնք ինչ-որ չափով բացահայտվել էին արդեն Վարդանանց պատերազմից առաջ, այժմ աչքի էին ընկնում ամենուրեք։

Մեր խոսքը վերաբերում է նախ և առաջ ուրացությանը։ Որպես երեւույթ այն ծագում է մի շրջանում, երբ Սասանյան գերիշխանությունը՝ գնոխս Արշակունյաց Հայաստանում, սկսել էր իրեն ավելի ու ավելի զգացնել տալ։ Ուրացությունը պարսկամետության ծնունդ է, այն աճել է քաղաքական հողի վրա և «անկեղծությունը» թե «կեղծավորությունը» այստեղ ոչ մի դեր չեն խաղացել։ (Որպես քաղաքական կողմնորոշում պարսկամետությունը իհարկե եղել է ավելի լայն, քան ուրացությունը, այդ տենդենցը միշտ չէ, որ արտահայտվել է կրոնափոխությամբ)։ Ուրացողներ են եղել արդեն IV դարի երկրորդ կեսին, հիշենք Ինկուզ Մեհրուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին, որոնց ընդհանրացրած պատկերները կերտել է Փավստոս Բուզանդը։ Երկրի բաժանումից և հատկապես մարզպանության կազմակերպությունից հետո ուրացությունը ավելի ու ավելի է սարսափելի։ 450—451 թթ. ապստամբությանը նախորդող տարիներին և ապստամբության ընթացքում այն արտահայտվել է լայն կերպով։ Ավարայրի ճակատամարտում հայ քրիստոնյաները դեմ են դուրս եկել նաև հայ ուրացողներին։

Վարդանանց ապստամբությունից հետո ուրացությունը ստացել էր աչքի ընկնող հասարակական երեւույթի որակ։ Եթե մինչ այդ խոսք էր լինում մեծ մասամբ անհատների մասին, ապա ապստամբությունից հետո ուրացությունը զանգվածային բնույթ էր ստացել։ Խոսելով ուրացողների մասին, Ղազար Փարպեցին օգտագործում է դասք, ցեղք, փաղանգ բառերը (էջ 116. 23, 120. 33, 126. 4 և այլն)[24]։ Թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում առաջանում է ուրացողների մի առանձին շերտ։

Եղել են դեպքեր, երբ կրոնափոխությունը ակամա մի դիջում էր, մի հնարավորություն՝ ապահովելու սեպական քաղաքական գիծը։ Այդպիսին է եղել Վարդան Մամիկոնյանի և նրան շրջապատող նախարարների ուրացությունը Տիզբոնում 450 թ.։ Այդպիսին է եղել նաև սպարապետ Վահան Մամիկոնյանի ուրացությունը՝ նման պայմաններում։ Գիտական գրականության մեջ ընդունված է որակավորել Վարդանի և մյուսների քայլը «առերես» ուրացություն, ասես այլ դեպքերում ուրացությունը եղել է անկեղծ, այսինքն ծագել է հոգեբանական հողի վրա։ Իրականում ուրացությունը բոլոր պարագաներում եղել է ռացիոնալ մի քայլ՝ համենայն դեպս մենք ի վիճակի ենք վերլուծել այդ երեւույթը միայն այդ տեսանկյունից, ուրիշ կարգի փաստական տվյալներ չունենք։ Արդի պատմագետը որակավորում է ուրացությունը որպես երեւույթ՝ դիտելով ուրացության առանձին օրինակները հատուկ քաղաքական կոնտեքստում։ Մինչդեռ դեպքերին ժամանակակից հասարակական կարծիքը սրանց մոտեցել է որպես զուտ կրոնական հողի վրա կատարված վճռական քայլերի, հրաժարվելով տեսնել որևէ երանգ։ Հավատարիմ մնացածների կարծիքը ուրացողների նկատմամբ եղել է խիստ բացասական, անկախ նրանից, թե ինչ պայմաններում կամ ինչ նպատակով է ուրացել այս կամ այն անձնավորությունը։ Եղիշեն նկարագրում է այն զայրույթը, որը առաջացավ Հայաստանում Վարդանի և մյուսների ուրացության կապակցությամբ, չնայած հեղինակը նշում է, որ հայ նախարարները կատարել են Հայքերտի կամքը «իբր թէ»[25]։ Իսկ Ղազար Փարպեցին՝ Վահանի ուրացության դեպքում չի բավարարվում հասարակական բողոքի նկարագրությամբ և իր կողմից մեղադրանքի խոսքեր է ուղղում իր բարեկամի և հովանավորի հասցեին։

Կրակապաշտություն ընդունած ուրացողների համար սրբություն չկա նաև նոր տարերքում։ «Եվ ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միգեն ի կրակն, և յանթեղ զաղբ իւրեանց արկանեն»,— այդպես է արտահայտվում նրանց մասին Վահան Մամիկոնյանը, պարսից զորապետի հետ բանակցելիս (էջ 136. 39—40)։ Ուրացողները ոչ այնքան նոր կրոն, որքան նոր դիրք էին

---

24 Հոդվածի բուն շարադրանքում այստեղ և ստորև հղում ենք Ղազար Փարպեցու՝ 1904 թ. հրատարակության համապատասխան գլուխներն ու էջերը, անհրաժեշտության դեպքում կետից հետո նշելով ավյալ էջի նաև տողերը։

25 Ե ղ ի շ է, էջ 50. 9։ Ղազար Փարպեցին ավելի պարզ է արտահայտվում՝ նախարարները խոնարհեցին գլուխները «խաբէութեամբ», «պատճառանօք և ոչ ճշմարտութեամբ» (էջ 53. 38—40 և այլուր)։

ընդունում։ Իսկ երբ պայմանները փոխվում էին, ապա այդ նորաթուխ կրակապաշտները հեշտությամբ վերադառնում էին իրենց նախնիների հավատքին։ 482 թ. հայերը ապստամբության որոշում են ընդունում. ավետարանի վրա երդվում են միաբանությամբ թե՛ քրիստոնյաները, թե՛ ուրացյալները, զարմանալի պարզությամբ արձանագրում է Ղազար Փարպեցին (էջ 120. 12—13)։

Ուրացությունը հարվածում էր քրիստոնեությանը ներսից, հայ եկեղեցին, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ։ Թվում է, որ իր հիմքն ամրապնդելու համար հենց այդ պահին է եկեղեցին նպաստել Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի առաջացմանն ու տարածմանը[26]։ Միայն այդ շրջանում է Գրիգոր Լուսավորիչը դառնում հայ եկեղեցու գլխավոր սուրբը, նախքան այդ նա մնացած է եղել կատարյալ անհայտության մեջ (Գրիգորին չեն ճանաչում ո՛չ Կորյունը, ո՛չ Եզնիկ Կողբացին, ո՛չ Եղիշեն), բայց նրա կերպարը առկա է Ղազար Փարպեցու Պատմության էջերում։ Իր երկը Ղազարը դիտում է որպես Երրորդ պատմություն, այն կազմում է Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի շարունակությունը։ Ագաթանգեղոսը ամբողջությամբ նվիրված է Գրիգոր Լուսավորչին, Փավստոսը մանրամասն խոսում է Լուսավորչի ժառանգների մասին։

Վարդանանց պատերազմի շրջանում պարսիկները հաճախ բռնի կերպով էին քրիստոնյաներին ենթարկում կրոնափոխության։ Հաջորդ շրջանում նման քայլերի մասին պատմիչը չի խոսում։ Ուրացությունը, որ թափ է ստանում հենց այդ շրջանում, լինում է կամավոր, առանց բացարձակ ճնշման։ Այն արտոնությունները, որոնք ակնկալում էին ուրացողները, եղել են բավական, որպեսզի գրգռեն նրանց դիմելու այդ քայլին։ Ուրացության վտանգը հասկացել էր ոչ միայն եկեղեցին, այն կռահել էին նաև աշխարհիկ քաղաքական գործիչները։ 484 թ. Վահան Մամիկոնյանը թվարկում է զինադադարի և նրան հաջորդող խաղաղության պայմանները։ Առաջին պայմանն է՝ «զհայրենի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զհայ այր զոք մի՛ մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան գահ և պատիւ չտայք» և առհասարակ պիտի ապահոված լինի քրիստոնեության ազատությունը (էջ 161. 11—18)։

Հայ նախարարների տեղը հասարակական աստիճանի վրա ընդհանրապես պիտի լիներ կայուն։ Այդ տեղը որոշված էր գահնամակով, որի հիմքում ընկած է եղել հենց անշարժության գաղափարը։ Մինչդեռ պարսից արքունիքը, երբ ժամանակ առ ժամանակ հաստատում էր գահնամակը, հաճախակի ձգտում էր վերանայել նրա մեջ արտահայտված գահերի հերթականությունը, ետ ու առաջ անել ազնվական տոհմերը։ Առաջնություն են ստանում «անտոհմիկները», իսկ բուն ազնվականությունը սահմանված է լինում հետ նահանջելու։ Ահա այդ խախտումն է նկատի ունեցել Վահան Մամիկոնյանը՝ Նվարսակի դաշնագրության առաջին կետը շարադրելիս։ «Անտոհմիկները» դիմում են ուրացության և դրա դիմաց ստանում նոր արտոնություններ։ Պարզվում է, որ հավատարիմ մնացած նախարարները տուժում են ոչ այնքան պարսիկ զորավարների բռնությունից, որքան «յարհամարհանաց և ի նախանձու է ի չարին իշխանացն Հայոց, որք ուրացութեամբն գոռոզացեալ ամբարհաւաճէին ի ժամանակին» (էջ 118. 25—28)։ Պարսից զորավար Միհրանի հետ բանակցություններ վարելիս Վահանը (ըստ Ղազար Փարպեցու) մի երկար ճառ է արտասանում։ Իսկական թագավորը, համոզում է նա իր հակառակորդին, պիտի կարողանա լավ ծառային զանազանել վատից։ Հայաստանը մեծ և պիտանի երկիր է, բայց ո՞վ է այստեղ արժանավորապես, թագավորի օգնությամբ ստացել տանուտերություն։ Իշխանությունը պատկանում է ավազակներին և անպիտաններին, հացկատակներին և վատտոհմիկներին։ Անտոհմիկներ, վատտոհմիկներ ետ են մղում տոհմիկներին, գրավում նրանց տեղերը։ Նման երևույթներ, Հազկերտ II-ի օրոք, գրանցել էր արդեն Եղիշեն[27]։ Սակայն այդպիսի քաղաքականությունը իսկական թափ է ստանում Վահանի ապստամբությանը նախորդող շրջանում։

Պատմիչների ասածից պարզվում է նաև մի ուրիշ հանգամանք՝ վատտոհմիկներն ու անպիտանները միաժամանակ ուրացողներ են՝ «ընդ կրակի փառս գնեն և տէրութիւն» (էջ 136. 38—39)։ Սխալ կլիներ, իհարկե, ուրացությունը կապել միայն այդ նորելուկների հետ. մենք գիտենք, որ ուրացողների շարքերի մեջ են մտել նաև ամենից բարձր նախարարական տոհմերի ներկայացուցիչները՝ Սյունի, Խորխոռունի, Բագրատունի և այլն։ Կարևորն այստեղ այն է, որ

---

26 П. М. Мурадян. Кавказский культурный мир и культ Григория Просветителя.—В сб. Кавказ и Византия, III. Ереван, 1982.

27 Եղիշէ, էջ 16. 17—19՝ «սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և դանարգս ի պատուականաց» և այլն. տե՛ս վերևում, էջ 49։

նոր պայմաններում ուրացությունն էր ճանապարհ հարթում դեպի բարձր պաշտոններն ու տիտղոսները, դեպի դահն ու պատիվը։ Այդ տենդենցը գնալով աճում և ուժ էր ստանում։

Նման քաղաքականություն էին վարում պարսիկները նաև Վրաստանում։ 484 թ. գարնանը Վիրք է ներխուժում զորապետ Ջարմիհր Հազարավուխտը։ Նրան հաջողվում է իր շուրջ ժողովել վրաց ուրացողներին։ Ինչպիսի՞ միջոցներով. «...ումեմն թագաւորութիւն խոստանայր, և ումեմն գա՛ և պատիւ և պարգև բազում, և այլոց բազմած զպլտս իւրաքանչիւր» (էջ 146. 23—24)։

Նշված հանգամանքները՝ ուրացությունը և ավանդական կարգերի խախտումը շարունակ բողոք են առաջացրել, որը և իր ծայրահեղ արտահայտությունը գտավ ապստամբության մեջ։ Նախարարները դժգո՛հ էին նաև վարչական համակարգից։ Անկարելի է, բացատրում էր Վահան Մամիկոնյանը պարսիկ Միհրանին, որ արքայից արքան կառավարի երկիրը ուրիշի միջնորդությամբ («տեսանել այլոյ աչօք և լսել այլոյ ականջօք», էջ 136. 29—30)։ Նույնպես և 484 թ., առաջարկելով խաղաղության պայմանագրի նախագիծը, Վահան Մամիկոնյանը պահանջում է, որպեսզի արքան «ինքն տեսցէ իւրովք աչօք, և ինքն լուիցէ իրովք ականջօք» և «ինքն գիտասցէ և ինքն խօսեսցի իւրով բերանով» են (էջ 161. 30—31)։ Արանք պարզ ակնարկներ են այն գրժկոհության, որն առաջացել էր մարզպանի իշխանության դեմ։ Նախարարները պահանջում էին, որ իրավունք ունենան դիմել շահանշահին առանց միջնորդի։ Դա չի նշանակում, թե նրանք բողոքում էին մարզպանության դեմ որպես ինստիտուտի, հաստատության։ Բայց նրանք ձգտում էին, որպեսզի փոխվի այդ հաստատության առօրյա գործունեությունը։

Սասանյանների դավանական քաղաքականությունը, նախարարական իշխանության ավանդական կարգերի խախտումը, մարզպանի վարչապետության ոտնձգությունները՝ ահա այն հանգամանքները, որոնք, ըստ Ղազար Փարպեցու, ազատագրական շարժման պատճառ դարձան (մեր հեղինակը խոսում է սովորաբար Վահան Մամիկոնյանի բերանով)։ Բայց այդ բոլոր հանգամանքների խորքում ընկած է մի ամբողջական պարագա։ Դժգոհություն էր առաջացնում ուժեղ իշխանությունը որպես այդպիսին։ Ե՞վ հայերը, և՛ վրացիները ստեղծել էին իրենց՝ բարձր քաղաքակրթությունը, որը սկզբունքորեն տարբեր էր պարսկականից։ Իրար էին բախվում ինչ-որ չափով հակամերժ աշխարհներ։

* * *

Պարսից գերիշխանությունը Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում ապահովում էր միայն ուժը։ Բավական էր, որ այդ ուժը թուլանար՝ իսկույն ձգտում էր առաջանում թոթափել Սասանյանների իշխանությունը։ Երբ Հազկերտ II-ի մահից հետո Պարսկաստանում ստեղծվեց խառը վիճակ, անմիջապես ասպատակվեց Աղվանից թագավոր Վաչեն։ Նա օգնության կանչեց մասքթաց զորքը, պարսիկները իրենց հերթին դիմեցին խայլնդուրների միջամտությանը։ Մեկ տարի տևեց պատերազմը, որից հետո պարտված թագավորը եւ ուղարկեց Պարսկաստան մորն ու տիկնոջը, իսկ ինքը հրաժարվեց գահից ու հեռացավ իրեն հատկացված գավառը։ Վաչեն քրիստոնյա էր ծնվել, պարսիկները նրան դարձրել էին կրակապաշտ։ Ապստամբելով նա վերադարձավ իր նախկին դավանանքին, իսկ հրաժարվելով թագավորությունից՝ դարձավ կրոնավոր։

Անջատվելու տրամադրություններ էին դարթնել նաև Հայաստանում։ Ղազար Փարպեցին ասում է, որ Դյուտ կաթողիկոսը և նրա շրջապատը տարակուսանքի մեջ են եղել՝ փախչե՞լ երկրից, թե՞ օգնություն խնդրել և ապստամբել։ Երկու անգամ դեսպաններ են ուղարկում Լեոն I (457—474) կայսեր գուռը, նա խոստանում է գալ օգնության, բայց հապաղում է, և ոգևորությունը ինքն իրեն վերանում է (էջ 113. 1—4)։

Ուրացողները հայտնում էին, որ գաղտնի ծրագրեր է մշակում նաև սպարապետ Վահան Մամիկոնյանը՝ «ոչ է հնար սմա առանց ապստամբութեան կալ ի Հայս»։ Հիշեցնում էին Վահանի նախնիների մասին՝ «ով է ի նոցանէ ոչ խոովեցոյց զԱրեաց աշխարհ և ոչ արար մեծամեծ վնասս և մահունս»։ Կգա ժամանակը, և նա ձեզ նույն վնասը կհասցնի։ Պնդում էին, որ Վահանը մտադիր է փախչել կայսեր կամ հոների մոտ՝ իր հետ տանելով աշխարհի ողջ ոսկին։ Այն ժամանակ, փրոք հավաքելով նրած ոսկին, Վահանը ստիպված եղավ ներկայանալ արքայից արքային և փորձ արեց արդարանալ։ Ամենայն հավանականությամբ, այդ նրան չհաջողվեց, նա ստրկված էր (ճիշտ այնպես, ինչպես և նրա հորեղբայր Վարդան Մամիկոնյանը) ուրանալ քրիստոնեությունը՝ «տկարանայր ի հաւատն»,— ասում է պատմիչը (գլ. Կե)[28]։

---

28 Ավելի մանրամասն՝ Կ. Ն. Յուզբաշյան. Ի՞նչ է սկսվել Վահան Մամիկոնյանի ապստամբությունը, էջ 96—97։

Հիմք կա մտածելու, որ Հայաստանում իրոք որ մշակվում էին ապստամբության ծրագրեր, բայց արտաքնապես հայերը հավատարիմ էին դեռևս պարսից շահանշահին։

Առաջին վճռական քայլը կատարեցին հարևան վրացիները՝ 482 թ. վրաց Վախթանգ I Գորգասալը (446—502) սպանեց Գուգարքի բդեշխ Վազգենին։ Այդ արարքը ճիշտ հասկանալու համար հարկավոր է փոքր-ինչ խոսանալ վերջին հարյուր տարվա վրաց պատմության մեջ։ Ճիշտ այնպես, ինչպես Հայաստանում, Վրաստանում ևս բախվում էին Սասանյանների և Հռոմեական (Բյուզանդական) կայսրության շահերը։ Կայսրությունը իրեն էր ենթարկել Արևմտյան Վիրքը, արևելյան հատվածում ձգտում էին հաստատվել Սասանյանները։ Սակայն Բյուզանդական կայսրությունը իրեն բավարարված չէր զգում, փորձեր էր անում նվաճել երկրի նաև հակառակ տարածությունը։ 370-ական թթ. երկու հակառակորդները համաձայնեցին բաժանել Արևելյան Վրաստանը (նախկին վիճակը վերականգնվեց, հավանաբար, արգեն դարավերջին)։ Ի տարբերություն Հայաստանի, այդ քայլը վարչական որևէ փոփոխություն չառաջացրեց։ 387 թ. հետո Վիրքի կազմի մեջ մտավ Գուգարքը։ Ինչպես և դարեր շարունակ, այստեղ տիրում են բդեշխները, սակայն նոր պայմաններում նրանց ֆունկցիաները փոխվել են։ Այսուհետև նրանց վիճակվում է ապահովել երկրում պարսից գերագույն իշխանությունը, տեղեկացնել արքունիքը Վիրքում տիրող տրամադրությունների մասին։ 450 թ. հայ նախարարների հետ միասին Տիգրան կանչվեց նաև Աշուշա բդեշխը, մյուսների հետ նա ստիպված եղավ ուրանալ իր հավատքը։ Ինչպես և Վասակ Սյունու երկու որդիները, նրան ևս Հազկերտը պահեց իր մոտ որպես պատանդ։

Վարդանանց պատերազմից հետո Աշուշան վերադարձավ հայրենիք, մնալով «ուրացող» Աշուշայի Անուշ-Վռամ կողակիցը և պատերազմում նահատակվա՝ Հմայակ Մամիկոնյանի Ցվիկ տիկինը հարազատ քույրեր էին։ Ցվիկը մնում է իր փեսայի հարկի տակ։ 455 թ. Աշուշային հաջողվում է գերությունից ազատագրել Հմայակի որդիներին՝ Վահանին, Վասակին և Արտաշեսին (չորրորդ եղբայրը Վարդը պահվում է Տայքում հսկողության տակ)։ Եղբայրները ևս մնում են Աշուշայի տանը։ Ընտանիքը սերտ հարաբերությունների մեջ էր Կամսարականների և Արծրունիների հետ՝ երկու տոհմից էլ եղել են նահատակներ։ Այստեղ է մեծացել նաև ապագա պատմիչ Ղազար Փարպեցին։ Այսպիսով, Աշուշան ինքը և իր շրջապատը՝ բոլորը տուժել են պարսից իշխանությունից (չնայած ապստամբությունից հետո Աշուշային հաջողվել էր նորից գրավել իր բարձր դիրքը)։ Բոլորովին այլ մթնոլորտ է տիրում Գուգարքում, երբ բդեշխությունը անցնում է Աշուշայի որդի Վազգենին։ Վազգենը ևս խնամիական կապեր ուներ Մամիկոնյանների հետ՝ նրա Վարդենի-Շուշանիկ կինը Վարդան Մամիկոնյանի դուստրն էր։

Շուշանիկի վկայաբանությունից մենք գիտենք, որ Տիգրան կանչվելուց հետո Վազգենը դարձել էր մոլեռանդ կրակապաշտ, նա փորձում էր իր կողմը քաշել նաև տիկնոջը։ Շուշանիկը դիմադրում էր մահն անգամ գերադասելով ուրացությունից. նա վախճանվեց կրած տառապանքներից[29]։ Եվ ահա այդպիսի մի պարսկամետ, ինչպիսին էր Վազգենը, սպանվում է Վախթանգ I Գորգասալ թագավորի ձեռքից։ Այդ սպանությունը պարզ, աներկրայելի նշան է եղել, որ Արևելյան Վրաստանի բնակիչները հրաժարվել են ճանաչել շահանշահի իշխանությունը և ապստամբել։ Վազգենի սպանությունը տեղի է ունեցել արքայից արքա Պերոզի 25-րդ տարում, այն է՝ 482 թ.։

Հայ զորքը այդ տարի գնացած էր եղել Ազվանք, սահմանապահ բերդերի կայազորի ապստամբությունը ճնշելու։ Նրանց հետ էին զորապետ Ջարմիր Հազարավուխտը և Հայոց աշխարհի մարզպան Ատրվշնասպ Հեղմանդեանը։ Հայերը ցնծությամբ ընդունեցին Վիրքի ապստամբության լուրը, մանավանդ որ Վախթանգն իբր խոստացել էր պատերազմը վարել հոների միջոցով։ Հայ զորականները մի պահ մտածեցին, որ նրանց կարող են բշել Տիգրան, սակայն երկյուղն անհիմն է եղել։ Ատրվշնասպ մարզպանի և Վեհվեհնամ հազարապետի գլխավորությամբ նրանք մտան Շիրակ և այստեղից դեսպաններ ուղարկեցին սպարապետ Վահան Մամիկոնյանի մոտ, որպեսզի նրան ևս համոզեն միանալ ապստամբությանը։ Սակայն սպարապետը տատանվում էր։ Ճիշտ է, նա գիշեր-ցերեկ մտածմունքի մեջ է՝ ինչպես վերացնել ուրացության կնիքը, բայց ապստամբության գաղափարը նա մերժում է։ Պարսիկները զորեղ են. հոռոմները թույլ են և խաբեբա, նրանք օգնություն են խոստացել մեր հայրերին և այնուհետև դավաճանել.

---

29 Շուշանիկը վախճանվեց քաղց ամսի 17-րդ օրը, բայց մահվան տարեթիվը անհայտ է. հմմտ. Памятники армянской агиографии, вып. I. Пер. с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян. Ереван, 1973, с. 320, прим. 17.

վիրրը մեզ ուժ չունի, նրա այրուձին սակավաթիվ է. հոներին չի կարելի վստահել. բայց ամենից շատ, ասում էր նա, վախեցեք հենց ձեզնից, դուք սուտ և անվստահ մարդիկ եք։ Այնուամենայնիվ համաձայնությունը կայացավ՝ թե՛ քրիստոնյաները, թե՛ «ուրացողները» երդվեցին ավետարանի վրա հավատարիմ մնալ իրենց գաղափարին (գլ. 49)։ Հավանաբար հենց այդ ժամանակ դաշինք հաստատեցին վրացիների հետ (տե՛ս էջ 132. 29—30, 133. 12), իսկ 483 թ., հակառակ որոշ անախորժությունների, հայերը օգնության հասան նեղն ընկած Վախթանգ թագավորին։

Ապստամբությունը սկզբից ԼԵԹ եղել է կազմակերպված։ Ապստամբները ճանաչեցին Վահանին Մամիկոնյան տոհմի տանուտեր, ընտրեցին նրան սպարապետ, իսկ Սահակ Բագրատունուն՝ մարզպան։ Այդ փաստերը նշանակալից են. ապստամբները պահպանում են եղած վարչական համակարգը, պահպանում են մարզպանի պաշտոնը, այսինքն այն կառուցվածքը, որը իմաստ է ստանում պարսից գերադույն իշխանության պայմաններում։ Նրանք ընդհանուր առմամբ պատրաստ են հանձնելու Սասանյաններին, միայն թե դրա հետ մեկտեղ ճանաչվեն նաև հայերի պահանջները։ Դաղար Փարպեցու պատմության մեջ հենց այդպիսի ոգով է բազմիցս արտահայտվում նաև Վահան Մամիկոնյանը, արտասանելով այն ճառերը, որոնք նրան է վերագրում հեղինակը։ Կատարյալ անկախությունը եղել է անհնարին, ապստամբները ձգտել են ինքնավարության և ի վերջո հասել իրենց նպատակին։

Դաղտնի իորհրդակցության արդյունքները հայտնի են դառնում պարսիկներին։ Մարզպանն ու հազարապետը փոխում են պարսիկներից ու հայ ուրացողներից կազմված՝ իրենց ենթակա ջոկատների դիրքը, կենտրոնացնում նրանց Անի ամրոցի մոտերքում, իսկ իրենք փախչում Արտաշատ։ Ապստամբները հետապնդում են նրանց, ոտկայն ապարդյուն. գրավում են Դվինը, ապա պաշարում Արտաշատը։ Մարզպանին ու հազարապետին այս անգամ ևս հաջողվում է խուսափել ու փախչել Ատրպատական՝ այն երկիրը, որտեղից զարեր անընդհատ թշնամի բանակները ներխուժել են Հայաստան։ Մարզպանին համոզում են, որ Վահանի ուժերը սակավաթիվ են, ո՛չ հոներից, ո՛չ էլ կոստրից նա օգնություն չի ստանալու, ուստի հարկավոր է եռանդուն կերպով գործն առաջ տանել։ Զենքի տակ ունենալով՝ թե՛ իր սեփական, թե՛ հարևան մարզերի տրամադրած զորքերը, պարսից մարզպանը մոտենում է Երասխ գետին (գլ. 44)։

Վահանն իրոր զգում էր, որ իր ուժերն անբավարար են և անգամ մտածում էր ամրանալ Տայրում՝ Մամիկոնյանների ժառանգական իշխանությունը կազմող նահանգում։ Հաղթեց, սակայն, հակառակ կարծիքը՝ սպարապետը և մարզպան Սահակ Բագրատունին պիտի մնան ոստանում[30] և գրոհեն թշնամուն 400-հոգիանոց մի բանակով։ Այդ բանակը մոտեցավ Երասխին, հույս ունենալով հարվածել թշնամուն, երբ նրա կեսը անցած կլինի գետը և ոտք դրած հայոց հողի վրա։ Բայց երբ ապստամբները մոտեցան Վարազկերտ գյուղին, պարզվեց, որ թշնամին արդեն ավարտել է անցումը (Դաղար Փարպեցին հակառակորդի ուժերը հաշվում է 7000 զինվոր)։ Վա՞հանի եղբայր Վասակ Մամիկոնյանն իր ձեռքի տակ եղած 100 զինվորով դուրս է գալիս հետախուզության և Կովակ գյուղի մոտ հանկարծ հանդիպում թշնամուն։ Հրամանատարն իրեն չի կորցնում, առանց կորուստի դուրս է հանում իր ջոկատը։ Վահանին հաղորդում է, որ պարսից բանակը մեծ է, սակայն «յոլովք ի նոսա անպիտանք են և քերթաքաղ իշավարեան» (էջ 123. 26)[31]։ Այնուամենայնիվ նա առաջարկեց ամրանալ լեռնակողմում։ Հայերը բանակ կազմեցին Ակորի գյուղի մոտ, Մասիսի ստորոտում։ Հենց այստեղ տեղի ունեցավ առաջին մեծ ճակատամարտը։

Ինչպես ասացինք, հայոց զորքը եղել է փոքրաթիվ՝ 400 հոգի 7000 պարսիկների դիմաց։ Ճակատամարտի թեժ պահին Դարջոյլ Խորխորունի մաղխազը միանում է թշնամուն։ Երկու կողմն էլ կռվում էին կատաղությամբ. ճակատամարտում սպանվում է մարզպան Ատրվշնասպը։ Սակայն հայերի վիճակն էլ տագնապալից էր. երկու նախարար անգամ լուր ուղարկեցին Դվին պարտության մասին, բայց անմիջապես հետո ժամանեց սուրհանդակը, հայտարարելով, որ հաղթանակը հայերի կողմն է։

Ջախջախելով պարսից բանակը հայ մարտիկները կարողացան հանգիստ անցկացնել ձմեռը։

---

30 Արշակունիների երբեմնի տիրույթը Հայաստանի կենտրոնական մասում, ուր գտնվում էին թե՛ Դվինը, թե՛ Արտաշատը. ոստան է կոչվել նաև մայրաքաղաքը՝ Դվինը։

31 Քերթաղ՝ հին ու մին քուրջեր՝ ցնցոտիներ հավաքող, իշավարեան՝ իշավար գոյականի հոգնակին. տե՛ս Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. IV, էջ 570։

483 թ. գարնանը պարսիկները նոր արշավանք ձեռնարկեցին։ Ինչպես և նախորդ տարում, նրանք շարժվում էին Ատրպատականից, փուշտիպանան սաղար Ատրներսեհի գլխավորությամբ[32]։ Վահան Մամիկոնյանը անմիջապես դուրս եկավ Դվինից նրան ընդառաջ և բանակեց Ներսեհապատ գյուղի մոտ, Արտազ գավառում։ Բանակում էր գտնվում նաև Հոհան Մանդակունի կաթողիկոսը։ Ճակատամարտը կատաղի էր, հայոց զնդի մի մասը ետ նահանջեց ու լքեց պատերազմի դաշտը։ Սահակ Բագրատունին մենամարտ սկսեց Ատրներսեհի հետ, իսկ Ներսեհ Կամսարականը սպանեց պարսից զորապետ Ստրվշնասպ Տապեանին։ Փախստականները նորից մտան մարտիկների շարքերը, բախտը սկսեց ժպտալ հայերին։ Ճակատամարտը ավարտվեց հայերի հաղթանակով։ Ջարդելով թշնամուն, նրանք վերադարձան «բարի անուամբ և բազում փառօք, լաւ աւարաւ և սաստիկ ընչիւք» (գլ. ՀԱ)։

Նույն գարնան երկրորդ մեծ հաջողությունն էր Վահանի եղբայր Վարդ Մամիկոնյանի փախուստը պարսիկների ձեռքից և վերադարձը, մանավանդ որ Վարդին հաջողվել էր փախչել «ծառաիւք, դրամբ և կազմածով» (գլ. ՀԲ)։ Օգնությունը ժամանակին էր, առաջիկայում պատերազմը պիտի ավելի սաստկանար։

Ներսեհապատի ճակատամարտից հետո Վահանի զորքը մնաց Ծաղկոտն գավառում, Վարշակի ջերմուկի մոտ։ Այդ նույն ժամանակ Վիրք ներխուժեց պարսից Միհրան զորապետը և նեղելով Վախթանգին, հարկադրեց նրան փախչել հայոց լեռները։ Ճարահատյալ թագավորը խնդրում է Վահանին դալ օգնության, և Հայոց գունդը, «վասն զի ուխտադիր էր ընդ թագաւորին Վրաց», անմիջապես դիմեց դեպի Վիրք։ Վախթանգը պնդում էր, որ օգնության պիտի գան նաև հոները (բայց նրանք այդպես էլ չերևացին)։ Շարժվելով դեպի Վրաց աշխարհ, հայերը միաժամանակ մնացին Կանգառք գավառում, ապա մոտեցան Կուր գետին և բանակեցին Ճարմանայնի կոչված դաշտում։ 3 թե 4 օրից երևաց պարսից բանակը, և այն ժամանակ հայոց զրնդի մի մասը կաղտնի բանակցություններ սկսեց Միհրանի հետ, խոստանալով, որ եթե ներում ստանան, ապա կանցնեն պարսիկների կողմը։ Թեև առաջացած պառակտումը թուլացրեց հայերի ուժերը, Վախթանգը համոզում էր գրոհել պարսիկների վրա։ Ճակատամարտը սկսվեց. Մամիկոնյանները և Կամսարականները կռվում էին հերոսաբար, սակայն հայ ջոկատները ստիպված եղան ետ նահանջել. տագնապ պատեց նաև վրացիներին։ Այդ ճակատամարտում սպանվեցին Վասակ Մամիկոնյանը և մարզպան Սահակ Բագրատունին։

Ճարմանայնի մարտը տեղի է ունեցել 483 թ. ամռանը[33]։

Ճարմանայնի պարտությունը ստիպեց Վահանին իր ուժերը տեղափոխել Տայք՝ այն երկիրը, որը արդեն Վարդան Մամիկոնյանի օրոք վեր էր ածվել ապստամբ ուժերի յուրատեսակ ուղաստարանի։ Նրան միացան մյուս փախստականները, բայց այստեղ դիմեց նաև Միհրանը։ Պարսից զորապետը կանգ առավ Դու գյուղում, որի վրայով անցնում էր պարսկա-հռոմեական սահմանագիծը։ Եվ ահա սպարապետի և Միհրանի միջև բանակցություններ են սկսվում։ Այն բառերը, որոնք Ղազար Փարպեցին վերագրում է Վահանին, անշուշտ զուտ գրական ծագում ունեն, բայց այնուհանդերձ Վահանի խոսքերի հիման վրա կարելի է պատկերացում կազմել Հայաստանում (գոնե նախարարական շրջաններում) տիրող տրամադրության մասին։ Միհրանը առաջարկում էր Վահանին՝ «յարքայից արքայի ի ծառայութենէ մի՛ ելաներ, և զաշխարհս Հայոց մի՛ տար ի վատնումն. ի հնազանդութիւն ե՛կ թագաւորին» ևն (էջ 136. 17—19)։ Իսկ Վահանը շարադրում էր պարսիկների գործած այն խարիտումները, որոնք և առաջացրին ապստամբության վերածված դժգոհությունը (էջ 136—139)։

Բանակցությունները չավարտած՝ Միհրանին անսպասելիորեն ետ կանչեցին Պարսկաստան։ Ճանապարհ ընկնելով, նա իր հետ տարավ Հրահատ Կամսարականին և Հազդ Սյունուն։ Կամսարականին հաջողվեց փախչել, իսկ Հազդ Սյունին պիտի ընտրություն կատարեր մահվան և ուրացության միջև. 483 թ. սեպտեմբերի 12-ին Հազդ Սյունին ավարտեց իր կյանքը որպես վկա։

Միհրանի գնալը Վահանին հնարավորություն տվեց շունչ առնել։ Սպարապետը տեղափոխվեց Արարատ և ձմեռեց Դվինում։ Փաստը նշանակալից է՝ 483—484 թթ. ոչ թե պարսիկները, այլ ապստամբներն են տիրում Հայոց երկրի բոլոր սրտում՝ ուստանում։

---

32 Փուշտիպանան սաղար՝ թիկնապահների պետ. Արշակունյաց Հայաստանում այդ պաշտոնին համապատասխանել է մաղխազը։

33 Հայագիտական գրականության մեջ ընդունված է սխալ թվագրություն՝ 482 թ. հմմտ. Կ. Ն. Յ ո ւ զ բ ա շ յ ա ն. Ե՞րբ է սկսվել Վահան Մամիկոնյանի ապստամբությունը, էջ 99, 101։

Զմեռ էր դեռևս, երբ Վիրքից դեսպաններ եկան, բերելով բոլորովին անսերեակայելի մի լուր։ Նրանց ասելով, մարզպան Սահակ Բագրատունին և սպարապետի եղբայր Վասակ Մամիկոնյանը Ճարմանայնի մարտից հետո կենդանի են մնացել։ Ծանր վերքերով, մեծ փորձություններից հետո նրանք վերջապես ապաստան են գտել ինչ-որ աբեղայի մոտ, իսկ այժմ սպասում են, որ իրենց օգնություն կգան, և իրենք կրկին կմասնակցեն ընդհանուր պայքարին։ Բերած լուրը Ղազար Փարպեցին անկանում է «սատանայական խօսս արանց անմտաց»։ Սպարապետը մեծ կասկածով է ընկալում այն՝ «դիտակցեալ զեկս պարսիկ գումարտակի յերկիրս Հայոց՝ խորհեալ իմացան զայլ, թէ բայքայել կարեմք և պառակտել զմողովումն զօրաց Հայոց որ յոստանի էին, և այսր և անդր ցրուել» (էջ 142. 36—143. 3)։ Այնուամենայնիվ, դիջելով «անխորհուրդ և թեթևամտից մարդոց», մի ջոկատ հն կազմում և ուղարկում Վիրք՝ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ։ Տեղ հասնելով նրանք, անշուշտ, ոչ ոքի չեն գտնում34.

Ավարտվեց նաև պատերազմական երկրորդ ձմեռը, երբ 484 թ. իր զորքով Հայաստան ներխուժեց Զարմիհր Հազարավուխտը (482 թ. նա եղել էր Աղվանքում, ամրականների ըմբոստությունը ճնշելու համար)։ Հայ ուրացողները հասցրեցին հաղորդել նրան, որ Հայոց զորքի կեսը գտնվում է Վիրքում, Վահանի ուժերը ոստանում փոքրաթիվ են։ Հազարավուխտը որոշում է գրոհել Վահանին Դվինի մոտ, այն մայրի անտառի կողմից, որը տնկել էր դեռևս Հայոց արքա Խոսրով II Կոտակը։ Վահանը և իր մարտիկները կռվում էին քաջաբար, սակայն ստիպված եղան նահանջել։ «Քաջաբար փախուստ առն հզօրի՝ սաստիկ ոչ երկիւղի գուշակէ առ միւս անդամ գործ թշնամեացն զնդի»,— նկատում է մեր հեղինակը (էջ 144. 30—31), սակայն դրությունը շատ ծանր էր։ Պարսիկները դուրս շպրտեցին ապստամբներին Դվինից, ճանապարհին վիրավորվեց կաթողիկոսը և քիչ էր մնում գերի ընկնեն։ Նույն օրը Վիրքից եկավ Մուշեղ Մամիկոնյանը, բայց նրան մնում էր միայն միանալ նահանջողներին (գլ. ՀԸ)։

Վահանը լավ էր պատկերացնում, թե ինչպիսին է վիճակը։ Նա որոշեց քաշվել խաղտեր, որը գտնվում էր բյուզանդական հատվածում։ Սպարապետն իր զորքով կանգ առավ Վարայվարում, Շաղագոմ գավառում։ Հազարավուխտը հույս ուներ, որ զգալով իրեն անվտանգության մեջ, Վահանը կկորցնի զգոնությունը։ Նա գրոհեց, և անակնկալի եկած սպարապետը չկարողացավ դիմադրել։ Ղազարն ասում է, որ պարսիկները «զբազումս ի ռամիկ մարդկանէն Հայոց սպանանէին» (էջ 145. 33—34). տեղացի՞ էին դրանք, թե՞ փախստականներ պարսից հատվածից։ Վահանին իր հիմնական ուժերով հաջողվեց այնուամենայնիվ փախչել, ուստի Հազարավուխտի արշավանքը ամենից կարևոր կետում նպատակին չհասավ։ Զարմիհր Հազարավուխտը տեղավորվեց Դու գյուղում, որտեղ անցյալ՝ 483 թ. բանակցություններ էին սկսվել Միհրան զորավարի և Վահան Մամիկոնյանի միջև։ Սակայն արդեն հաջորդ օրը Հազարավուխտը հրաման ստացավ ուղևորվել դեպի Վիրք՝ «զթագաւորն Վրաց զՎախթանգ կամ ունել և կամ սպանանել և կամ ի բաց փախուցանել յաշխարհէն» (էջ 146. 13—14)։ Նշանակվել էր Հայաստանի նոր մարզպան՝ Շապուհը Միհրան տոհմից, իր հատուկ գնդով (գլ. ՀԹ)։

Վայթանը թագավորը նույնպիսի ծանր վիճակում էր գտնվում, ինչ որ և Վահանը։ Երբ Հազարավուխտն իր զորքով մտավ Արևելյան Վրաստանի սահմանները, ազատանու մի մասը, ուրանալով, միացավ նրան։ Պարսից զորավարին շրջապատում էին նաև նրանք, ովքեր արդեն առաջ «ընդ արքայից արքայի միաբանութեամբ էին» (էջ 146. 22—23)։ Խոստումներ անելով, Հազարավուխտը կարողացավ միաբանել այդ բազմությունը («միաբանեցուցեալ զշատս ազգս աշխարհէն Վրաց»)՝ կազմելով մի հատուկ գունդ։ Սեփական հպատակների դավաճանությունը ստիպեց Վախթանգին ապաստան որոնել եգեր աշխարհում (էգրիսի)։

Հայաստանում տեղի են ունենում բախումներ, սակայն մեծ ճակատամարտեր չեն լինում։ Ղազար Փարպեցին միշտ նշում է ապստամբների հաջողությունները, մինչդեռ նրա շարադրանքից ևս պարզ է, որ Վահան Մամիկոնյանի վիճակը արտակարգ ծանր է եղել։ Սպարապետը կենտրոնացրել էր իր ուժերը պարսկա-բյուզանդական սահմանագծի մոտ, բայց սահմանն անգամ ապահովություն չէր տալիս պարսիկների հարձակումներից։

---

34 Այս միջադեպը առեղծվածային է. բանն այն է, որ Վասակ Մամիկոնյանի և Սահակ Բագրատունու սպանության պարագաների մասին Ղազար Փարպեցին չի հաղորդում. «Պատմության» այն ձեռագիրը, որից բխում են և բոլոր մյուսները, այդ տեղում ըստ երևույթին մի բաց ունի։ Եթե երբևիցե գտնվի մի անթերի գրչագիր, հավանաբար կպարզվի, թե ինչ հողի վրա է առաջացել Վասակի և Սահակի կենդանի մնալու առասպելը։

Պետք է ասել, որ հակառակորդի հաջողություններն էլ լին տարակուսելի։ Ապստամբությունը շարունակվում էր, չէր հաջողվում ո՞չ ջարդել Վահան Մամիկոնյանին ու Վախթանգին, ո՞չ էլ դերի վերցնել։ Պարսիկների համար վտանգ կար, որ հայերը կդիմեն բյուզանդական հատվածում բնակվող իրենց հայրենակիցներին։ Ղազար Փարպեցու ասելով՝ Շապուհը կարծիք էր հայտնել, թե անհրաժեշտ է որպեսզի Պերոզը վերադառնա տուն և անձամբ ղեկավարի ռազմական գործողությունները Հայաստանում։ Եվ ահա, պարսիկների համար ծանր այդ պահին հայտնի է դառնում, որ հեփթաղների պատերազմում իր մահն է գտել արքայից արքա Պերոզը։ Դա տեղի է ունեցել 484 թ. գարնանը կամ ամռանը։

Պարսիկների պարտությունը արևելքում բացահայտեց Իրանի արտաքին քաղաքականության ողջ ճգնաժամը։ Ամենայն հավանականությամբ, այստեղ իր դերը կատարեց նաև հայ-վրացական ապստամբությունը, հայերի ու վրացիների համառ դիմադրությունը։ Երբ Պերոզի սպանության լուրը հասավ Անդրկովկաս, Շապուհն ու Հազարավուխտը անմիջապես դուրս հանեցին իրենց զորքերը։ Իսկ Վահան Մամիկոնյանը հաղթական մուտք գործեց Դվին։

Պերոզի հաջորդն էր նրա եղբայր Վաղարշը (484—488)։ Եթե հավատանք Ղազար Փարպեցուն, ապա նրա թագավորության հաջորդ օրն իսկ Ջորմիհր Հազարավուխտը խոսք բացեց Հայաստանի մասին։ Նրա ասելով՝ ապստամբությունը Պերոզի անմիտ քաղաքականության հետևանք է եղել։ Իր կարծիքը հայտնեց նաև մարզպան Շապուհը։ Եթե հարաբերություններն այլ լինեին,— ասաց նա,— Հայոց երկիրը կշարունակեր ծառայել պարսիկներին, իսկ դա նշանակում է, որ նաև Վիրքն ու Աղվանքը բռնած կլինեին Նույն գիծը, «զի յորժամ Հայք այնպիսի որերով մեր էին՝ Վիրք և Աղուանք չիշխէին բնաւ թիւրել զանձինս և այլազգադոյնս ինչ խորհել» (էջ 159. 27—28)։ Եվ ահա Վաղարշը Հայոց աշխարհ է ուղարկում Նիխոր Վշնասպդատին՝ «դայր հեզ և զմտացի և աշխարհաշէջն»։ Շահանշահը կարգադրում է. «Ե՛րթ ի Հայս, և որ ինչ օրինակաւ և է՝ ամենայն քաղցրութեամբ և սիրով ըստ կամացն Վահանայ և նորուն ընկերակացն՝ նուաճեալ զորեարն ի յԱրեաց ի ծառայութիւն ա՛ծ» (էջ 159. 36—39)։ Խաղաղ բանակցության արդյունքներն ապահովելու համար Նիխորն իր հետ ունեցել է մեծ զորաբանակ։

Նիխոր Վշնասպդատը փորձ չարեց մտնել Հայաստանի խորքը, այլ կանգ առավ Նվարսակ գյուղում, Ատրպատականի և Հայոց աշխարհի սահմանագծի մոտ։ Հենց այստեղ էլ սկսվեցին բանակցությունները նրա և սպարապետի միջև։ Ղազար Փարպեցին մանրամասն նկարագրում է բանակցությունների հաջորդականությունն ու կարգը, վերարտադրում մասնակիցների ճառերը և այլն։ Շատ բան այստեղ պայմանավորված է «Պատմության» ժանրային պատկանելությամբ, սակայն հիմք չունենք կարծելու, թե բանակցությունների էությունը հաղորդելիս հեղինակը շեղվում է ճշմարտությունից։

Կողմերը դեռևս չեն վստահում մեկը մյուսին, ուստի կարծիքների փոխանակությունը կատարվում է միջնորդների մասնակցությամբ։ Ընթացքը սկզբից ևեթ հօգուտ հայերի էր։ Վահանը հանդես է գալիս եթե ոչ որպես հաղթող, ապա ոչ էլ պարտված։ Խուզաղությունը հնարավոր է և ցանկալի, հայերը պատրաստ են կրկին անցնել արքայից արքայի «ծառայության», սակայն անհրաժեշտ է դրա համար սպահովել երեք պայման։ Այդ պայմաններն են՝

1. Պարսիկները հարգում էին «զհայրենի և զբնիկ օրէնս մերս», հայերին «մոգ» (այսինքն՝ զրադաշտական, կրակապաշտ) չեն դարձնում, մոգության համար գահ և պատիվ չեն շնորհում։ Կրակատները վերացվում են, իսկ քրիստոնեական կարգը լրիվ վերականգնվում։

2. Մարդկանց գնահատելիս հարկավոր է զանազանել «լավերին»՝ «վատթարներից», «տոհմիկներին»՝ «անտոհմիկներից» և այլն, դրանից կշահի հենց Արյաց աշխարհը։

3. Արքայից արքան պիտի անձամբ խորհուրդ լինի Հայաստանի գործերին. ամէն ինչ դիտի իր աչքով, լսի իր ականջով և խոսի իր բերանով։

Բանակցությունների և հետագա անձնական հանդիպման պահին Վահան Մամիկոնյանը հանդես է գալիս արժանապատվությամբ[35]։ Նիխորի բանակին նա մոտեցավ մեծ հանդիսավորությամբ՝ անձամբ գլխավորելով ջոկատը, նրա մարդիկ՝ լրիվ զինված, բացի այդ, Վահանը հրաման էր տվել, որ հնչեցնեն պատերազմական փողեր։ Պարսիկների մոտ կասկած առաջա-

---

35 Արժանապատվության զգացումն ուրախ է նաև Ղազար Փարպեցու թղթում։ Այդ գիծը, ըստ հեղինակի՝ բնորոշում է մարդու բարոյագիտական կերպարը։ Անկախ նրանից, թե որքան հարազատ են Վահանի ճառերը, նրանք եզակի են հայ գրականության մեջ հենց այդ, վառ արտահայտված արժանապատվության երանգով։ Գրականագիտությանը մնում է գտնել այդ կարևոր հանգամանքի արմատները։

ցավ ի՞նչ նպատակով է գալիս Վահանը, և նրանք բողոքեցին՝ այդպես կարող է իրեն պահել Արյաց (այլ ոչ թե Հայոց) սպարապետը։ Վահանը պատասխանեց, որ Արյաց աշխարհի օրենքներին ինքը լավատեղյակ է, իսկ հրաման տալը վաղաժամ է, հարկավոր է նախապես նրան դարձնել շահանշահի ծառա («նախ արա զիս Արեաց տեառն ծառայ»)։

Անձնական հանդիպումները էական փոփոխություններ չմտցրին։ Վահանը պահանջեց, որպեսզի քրիստոնեության ազատության հրովարտակը ունենա արքայից արքայի կնիքը, Նիխորն ըստ երևույթին համաձայնեց, սակայն իր կողմից պահանջեց, որ Վահանը հատուկ գունդ ուղարկի Զարեհի՝ սպանված Պերոզի որդու դեմ, որը խռովություն էր սկսել Իրանում։ Հայոց գունդը ճնշեց ապստամբությունը (ռազմական ծառայությունից բացի, այդ քայլը, ըստ երևույթին, դիտվել էր որպես Վահանի հավատարմության յուրատեսակ մի ցույց) (գլ. ՂԱ—ՂԴ)։

Վերջապես, տեղի ունեցավ Վաղարշի և Վահանի անձնական հանդիպումը։ Ողջունելով սպարապետին, Վաղարշն ասաց, որ հայերի ապստամբության պատճառը Պերոզի գործած սխալներն են։ Վահանը իր հերթին դատապարտեց սպանված արքայից արքային, շեշտելով, որ եթե նրա բռնապետության մյուս զոհերը նյութապես էին տուժում, ապա հայերը ունենում էին հոգեկան կորուստներ («իսկ զմեզ՝ հոգւովք հարկանէիք», էջ 173. 14)։ Վահանը մանրամասն վերլուծեց այն պատճառները, որոնք հայերին ստիպեցին զենքի դիմել, շեշտեց պարսիկների անարդարացի վարմունքը։ Եթե պարսիկները ճիշտ դիրք ընդունեն, ապա հայերը կլինեն նրանց վստահելի հպատակները։ Վաղարշը համաձայնություն տվեց ճանաչել հայերի բոլոր պահանջները, իր հերթին կրկնեց, որ Պերոզի բռնությունն է եղել ապստամբության պատճառը. այդ արարքի համար հայերը ընդմիշտ թողություն են ստանում։ Բայց հայերը պիտի լինեն իրենց տերերի հավատարիմ ծառաները (գլ. ՂԵ)։

Վահանը ճանաչվեց Մամիկոնյանների տանուտեր, հաստատվեց, ըստ նրա նախնիների օրինակի, հայոց սպարապետ (հետաքրքիր է, որ նոր շահանշահը նորոգում է իր նախորդի որոշումները, որոնք, ըստ երևույթին, ապստամբության պատճառով համարվել էին չեղյալ)։ Ճանաչվեցին նաև Վահանի զինակիցների իրավունքները։ Որոշվեց Կամսարական տոհմի տանուտերը (Ներսեհը)։ Ինչ վերաբերում է Արծրունիներին, ապա արքայից արքան հետաձգեց հարցի լուծումը, մինչև որ այդ տոհմը իր վաստակներով արժանանա արքայական շնորհին (գլ. ՂԶ)։

Հրաժեշտ տալով արքայից արքային, Վահանը վերադառնում է հայրենիք։ Նրան ընդառաջ է դուրս գալիս կաթողիկոս Հովհան Մանդակունին, միասին նրանք մտնում են Վաղարշապատ։ Վահանը նվիրատվություն է անում կաթողիկե եկեղեցուն և սուրբ կույսերի տաճարներին, եկեղեցիներում այդ օրերին ճոխ արարողություններ են լինում, որից հետո Վահանը հանդիսավոր կերպով մուտք է գործում Հայոց աշխարհի «րուն ոստանը» (տվյալ դեպքում մայրաքաղաքը)՝ Դվին։

Դվինը, անշուշտ, եղել է նաև նոր մարզպան Անդեկանի նստավայրը։ Ապստամբությունը ավարտվել էր, պարսից արքունիքի հետ բարի հարաբերություններ էին սահմանվել։ Արձանագրելով մթնոլորտի փոփոխությունը, Ղազար Փարպեցին մարզպանի մասին ասում է, որ նա եղել է «այր խելացի, մտադիր, իմաստահայեաց, որ գիտէր ճանաչողութեամբ որոշել զիմաստունն յանմտէն և զկան ի վատթարէն»։ Անդեկանի և Վահանի միջև հաստատվեցին, ըստ մեր պատմիչի, բարեկամական հարաբերություններ։ Հայոց աշխարհում տիրեց խաղաղություն։ Իսկ 485 թ. (՞) Հայոց մարզպան նշանակվեց երբեմնի ապստամբ Վահան Մամիկոնյանը։

V դարի հակասասանյան առաջին և երկրորդ ապստամբություններն իրենց էությամբ շատ մոտ լինելով, ունեցել են միանգամայն տարբեր ընթացք։ Առաջինը տևել է ոչ լրիվ մեկ տարի՝ 450 թ. ամռան ամիսներից մինչև 451 թ. մայիսը։ Երկրորդի տևողությունն է մոտ երկու տարի. այն սկսվել է 482 թ. և ավարտվել 484 թ. կեսին[36]։ Առաջին ապստամբության համեմատ, երկրորդը եղել է ավելի զանգվածային, տարածվել երկրով մեկ։ Եթե Վարդանանց պատերազմը գլխավորապես Ավարայրի ճակատամարտն է, ապա Վահանի ապստամբության ընթացքում, չհաշված բազմաթիվ փոքր բախումները, տեղի են ունեցել երեք մեծ ճակատամարտ՝ Ակոռի

---

36 Ինչպես ասացինք վերևում, Վազգենի սպանությունը, որից և սկսվել է ապստամբությունը, տեղի է ունեցել Պերոզ արքայի 25-րդ տարում։ Այդ տարին ավարտվել է 482 թ. հուլիսի 13-ին (եթե հաշվենք, հետևելով պարսկական տոմարին) կամ հուլիսի 18-ին (ըստ հայկական տոմարի)։

Ներսեհապատի, Ճարմանայնի դաշտի։ Առաջին ապստամբությունը գերազանցապես հայկական էր, երկրորդին մասնակցել են թե՛ հայերը, թե՛ վրացիները։

Ղազար Փարպեցու մանրամասն շարադրանքի հիման վրա հնարավոր էր պարզել ազատագրական այս երկրորդ շարժման որոշ առանձնահատկություններ։ Երկու կողմերի բախումը ունեցել է զուտ ռազմական բնույթ, նրան մասնակցել են միայն զինվորական ստորաբաժանումներ։ Տեղացի բնակչության նկատմամբ որևէ ճնշման մասին ոչինչ չգիտենք, բացառությամբ մեկ-երկու միջադեպի։ Այսպես, 484 թ. գարնանը, երբ ապստամբներն առավել ծանր վիճակում էին գտնվում, պարսից ջոկատները «զբաղումս ի ռամիկ մարդկանէ Հայոց սպանանէին» (էջ 145. 33—34)։ Դեպքը տեղի է ունեցել Շաղագոմք գավառում, Հայոց աշխարհի բյուզանդական հատվածում։ Խոսվում է նաև այն մասին, որ պարսից զինվորները հարձակվեցին Կարինի մոտերքում հունձ անող մշակների վրա, բայց նախարարներին հաջողվեց պաշտպանել գյուղացիներին (էջ 148—149)։ Այսպիսով, ընդհանուր առմամբ ապստամբության հաջողությունը կախված էր ռազմական գործողությունների արդյունքներից, ընդ որում այդ գործողությունները երկու կողմն էլ վարում էին հետևելով ժամանակի կանոններին։

Ինչպես հայերի, այնպես էլ վրացիների մոտ գլխավոր դերը կատարում էր այրուձին[37], որը կազմված էր գերազանցապես ազատներից ու նախարարներից. այդ իսկ պատճառով Ղազարի շարադրանքը լի է ազնվական անունների հիշատակությամբ։ Բայց ռամիկները ևս մտել են այրուձիի կազմի մեջ (տե՛ս էջ 144. 21—23)։ Որոշ ակնարկներից կարելի է եզրակացնել, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ ապստամբության շրջանում հատուկ հասարակական դեր են կատարել նաև ռամիկ-շինականները։ Այդ մասին անուղղակի կերպով վկայում է նաև հետևյալ միջադեպը։ Երբ Վահան Մամիկոնյանը ներկայանում է Նիխոր Վշնասպդատին, վերջինս դորնպակ զրույցից հետո հրաման է տալիս «ամենայն եկելոցն ընդ Մամիկոնէնին Վահանայ՝ նախարարաց և ռամկաց, մտանել յատեանն առ նոսա» (էջ 169. 23—24)։ Իր դերն է կատարել, անշուշտ, նաև հոգևորականությունը՝ հայ մարտիկների հետ է եղել ինքը կաթողիկոսը։

Շարժումն անշուշտ միաձույլ չի եղել, ընդ որում «ուրացությունը» չէ միայն, որ վնասել է միասնությանը։ 484 թ. ապրիլի 9-ին Վահան Մամիկոնյանի կողմնակիցների և հակառակորդների միջև խնկական պատերազմ է սկսվել (հաղթանակ են տարել սպարապետի մարդիկ)։ Կատարյալ համաձայնություն չի եղել նաև հայերի ու վրացիների միջև։ Եթե հավատալու լինենք Ղազար Փարպեցուն, վրաց թագավորը շարունակ խորամանկություններ է արել, դրանով երբեմն վնաս հասցնելով իր դաշնակիցներին։ Բայց գործը քիչ թե շատ լուրջ բախման չի հասել. Հակառակ մասնակի հակասությունների, հայերին ու վրացիներին՝ այդ շրջանում դեռևս միադավան՝ ամուր կապել է ընդհանուր նպատակը և դրացիական հարաբերությունների բազմադարյան ավանդույթը։

Թվական գերակշռությունը իբրև օրենք պարսիկներինն է եղել։ Ակոռիի ճակատամարտում 7000 պարսիկ զինվորների դեմ դուրս են եկել 400, հետագայում, մաղխազ Գարջոյլի դավաճանությունից հետո՝ 300 հայ։ 483 թ. Դու գյուղի մոտ տեղի ունեցած մարտում պարսիկների թիվը հասել է հազարների, իսկ հայերինը՝ ընդամենը հարյուրների (էջ 137. 15—16)։ Կարելի է, իհարկե, նման տվյալների ստույգ լինելու վրա կասկածել, բայց, բոլոր դեպքերում, փոքրաթիվ ապստամբները դուրս են եկել բազմաքանակ պարսից զորքի դեմ։

482—484 թթ. ապստամբությունը վերացրեց այն տագնապալից երևույթները, որոնք առկա էին Հայաստանում շարժման նախօրեին։ Չէր վերացել, անշուշտ, պարսից գերագույն իշխանության լուծը, մնում էին այն հակասությունները, որոնք հատուկ են միջնադարյան հասարակությանը։ Այնուհանդերձ, պայքարի հաղթական ավարտը լիցքավորեց, բարոյական նոր ուժ տվեց հայերին։ Նույնը կարելի է ասել նաև հարևան վրացիների մասին։ Ինքնավարության վերականգնումը պատմական զարգացման ինքնուրույն ուղի ապահովեց թե՛ հայերի թե՛ վրացիների համար։ Այդ է եղել 482—484 թթ. ապստամբության ամենից կարևոր արդյունքը։

---

37 Վահանի զորքը եղել է շարժունակ. սպարապետը հեշտությամբ տեղափոխում է այն Այրարատից դեպի Տայք, անցնում պարսկա-բյուզանդական սահմանը, իսկ երբ իրադրությունը փոխվում է՝ անմիջապես վերադառնում Դվին։

АРМЯНО-ГРУЗИНСКОЕ ВОССТАНИЕ ПРОТИВ ВЛАДЫЧЕСТВА САСАНИДОВ (482—484 гг.)

Доктор ист. наук К. Н. ЮЗБАШЯН (Ленинград)

Резюме

Второе восстание против Сасанидов (482—484 гг.) было вызвано, по существу, теми же причинами, что и первое (450—451 гг.),—экономическим гнетом, нарушением традиционной внутренней структуры общества, религиозными гонениями. Широкие размеры приобрело отступничество от христианства. Появилась своеобразная прослойка отступников, составивших основу власти персидского царя царей. Все это наносило удар по самоуправлению народов южного Предкавказья, в той или иной мере оказавшихся в зависимости от Ирана.

Статья содержит сопоставительный анализ движений 450—451 и 482—484 гг., в ней подробно излагаются перипетии второго восстания, оцениваются его результаты.